ՀՀ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՏՆՏԵՍԱԿԱՆ, ՍԱՆՀԻԳԻԵՆԻԿ և ԼՎԱՅՔԻ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

N << ԱՄ-ՄԱ-ԱՊՁԲ- 23/1-ԱՄ>>

ք. Արտաշատ

<23> հունվարի 2023թ.

ՀՀ Արարատի մարզպետարանը, ի դեմս աշխատակազմի գլխավոր քարտուղար Ա.Մկրտչյանի, որը գործում է մարզպետարանի կանոնադրության հիման վրա, այսուհետ ,Գնորդ, մի կողմից, և <<Յու. Հարությունյան և Որդիներ>> ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Յու..Հարությունյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, այսուհետ ,Վաճառող մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման-ժամանակացույցով նախատեսված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Գնորդն իրավունք ունի՝

2.1.1 Ապրանքը պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են 5 օրից ավելի:

2.1.2 Եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ պայմանագրով նախատեսված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք՝

ա) պահանջել հատուցելու ապրանքի անպատշաճ որակի լինելու պատճառով իր կատարած ծախսերը.

բ) չընդունել ապրանքն՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ապրանքը պայմանագրին համապատասխանող որակի ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.3 կետով նախատեսված տուգանքը.

գ) հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ապրանքի համար վճարված գումարը:

2.1.3 Եթե հանձնվել է պայմանագրով որոշվածից պակաս քանակի ապրանք, ապա՝

ա) պահանջել լրացնելու ապրանքի պակաս հանձնված քանակը,

բ) հրաժարվել հանձնված ապրանքից և դրա համար վճարելուց, իսկ եթե ապրանքի համար վճարվել է, ապա պահանջել վերադարձնելու վճարված գումարը և վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.4 Եթե հանձնվել է տեսակի պայմանի խախտմամբ ապրանք, իր ընտրությամբ՝

ա) ընդունել տեսակի վերաբերյալ պայմանին համապատասխանող ապրանքը և հրաժարվել մնացած ապրանքներից.

բ) հրաժարվել հանձնված բոլոր ապրանքներից և պահանջել վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը.

գ) պահանջել տեսակի վերաբերյալ պայմանին չհամապատասխանող ապրանքի անհատույց փոխարինում պայմանագրով նախատեսված տեսակին համապատասխան ապրանքով:

2.1.5 Վաճառողի կողմից մատակարարման ժամկետների խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել ապրանքի մատակարարման նոր ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.6 Վաճառողից պահանջել հատուցելու վնասները, եթե Գնորդը Վաճառողի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է ապրանք՝ պայմանագրով նախատեսվածի փոխարեն՝ պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով, ինչպես նաև ապրանքն այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը:

2.1.7 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը.

2.1.7.1 Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 5 օրից ավելի,

2.1.8 Ձևնել ապրանքը և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2 Գնորդը պարտավոր է՝

2.2.1 Կատարել պայմանագրին համապատասխան մատակարարված ապրանքի ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները:

2.2.2 Վաճառողի հանձնած ապրանքից պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում, ապահովել այդ ապրանքի պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2.3 Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված ապրանքն ընդունելու դեպքում Վաճառողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

2.2.4 Ապրանքի քանակի, տեսականու, որակի մասին պայմանագրի պայմանները խախտելու մասին Վաճառողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո՝ ողջամիտ ժամկետում, երբ պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ՝ ելնելով ապրանքի բնույթից և նշանակությունից:

2.2.5 Պայմանագրի 2.3.4 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Վաճառողին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.3 Վաճառողն իրավունք ունի՝

2.3.1 Գնորդից պահանջել ընդունելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված ապրանքը:

2.3.2 Գնորդից պահանջել վճարելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված և Գնորդի կողմից ընդունված ապրանքի համար իրեն վճարման ենթակա գումարները:

2.3.4 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Գնորդն էականորեն խախտել է պայմանագիրը:

2.3.4.1 Գնորդի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե բազմիցս խախտվել են ապրանքի համար վճարելու ժամկետները:

2.3.5 Գնորդի համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարել ապրանքը:

2.4 Վաճառողը պարտավոր է՝

2.4.1 Գնորդին հանձնել ապրանքը՝ պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով:

2.4.2 Ապահովել ապրանքի մատակարարումը պայմանագրի 2.1.2 կետի բ) ենթակետին և (կամ) 2.1.5 կետին համապատասխան՝ Գնորդի կողմից սահմանված ժամկետներում:

2.4.3 Գնորդին հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ ապրանք:

2.4.5 Գնորդին հանձնել պայմանագրով նախատեսված որակի և քանակի ապրանք՝ պայմանագրով նախատեսված ժամկետներում և հասցեով, իսկ Գնորդի պահանջով տրամադրել ապրանքի որակը հավաստող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր:

2.4.6 Թերի մատակարարում թույլ տալու դեպքում, պայմանագրով նախատեսված կարգով, լրացնել թերի մատակարարվածը:

2.4.7 Հետ տանել Գնորդի կողմից պայմանագրի 2.2.2 կետին համապատասխան՝ պատասխանատու պահպանության ընդունված ապրանքը կամ ողջամիտ ժամկետում տնօրինել այն, ինչպես նաև հատուցել ապրանքը պատասխանատու պահպանության ընդունելու, այն իրացնելու կամ Վաճառողին վերադարձնելու հետ կապված անհրաժեշտ ծախսերը:

2.4.8 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.9 Գնորդին հանձնել ապրանքի պատկանելիքները և համապատասխան փաստաթղթերը:

2.4.10 Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Գնորդին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.4.11 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Գնորդին:

3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Պայմանագրի գինը կազմում է 413940(չորս հարյուր տասներեք հազար ինը հարյուր քառասուն) ՀՀ դրամ, որից 68990 (վաթսունութ հազար ինը հարյուր ինսուն) ՀՀ դրամը՝ ԱԱՀ-ն է: Պայմանագրի գինը

---

[17] *Եթե Վաճառողի կողմից գնային առաջարկը ներկայացվել է առանց ԱԱՀ-ի, ապա պայմանագիրը կնքելիս «ներառյալ ԱԱՀ-ն» բառերը հանվում են:*

ներառում է պայմանագրի կատարումն ապահովելու նպատակով Վաճառողի կողմից կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում՝ հարկերը, տուրքերը, փոխադրման, ապահովագրման ծախսերը, պարգևավճարները և ակնկալվող շահույթը:

Ապրանքի մատակարարման գինը կայուն է և Վաճառողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Գնորդը նվազեցնելու այդ գինը:

3.3 Գնորդն իրեն մատակարարված ապրանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված ամիսներին, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 25-ը:

Ընդ որում վճարում կատարելու նպատակով հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվելու օրվանից հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում գնորդը վճարման հանձնարարագիրը և հանձնման-ընդունման արձանագրության պատճենը մուտքագրում է լիազորված մարմնի գանձապետական համակարգ, իսկ սահմանված կարգի համաձայն ներկայացված փաստաթղթերի հիման վրա լիազորված մարմինը տվյալ վճարումը կատարում է հանձնման-ընդունման արձանագրությունը գանձապետական համակարգ մուտքագրված լինելու դեպքում՝ սույն պայմանագրի վճարման ժամանակացույցով սահմանված ժամկետներում, հինգ աշխատանքային օրվա ընթացքում[17.1]:

4. ԱՊՐԱՆՔԻ ՈՐԱԿԸ ԵՎ ԵՐԱՇԽԻՔԸ

4.1 Վաճառողը երաշխավորում է մատակարարված ապրանքի որակի համապատասխանությունը պետական ստանդարտի պահանջներին:

5. ԱՊՐԱՆՔԻ ՀԱՆՁՆՈՒՄԸ ԵՎ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ

5.1 Մատակարարված ապրանքն ընդունվում է Գնորդի և Վաճառողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսվում է Գնորդի և Վաճառողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ապրանքի մատակարարման համար նախատեսված օրը ներառյալ Վաճառողը Գնորդին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1) և հանձնման-ընդունման արձանագրության _____2_____ օրինակ (հավելված N 3):

5.2 Հանձնման-ընդունման արձանագրությունը ստորագրվում է, եթե մատակարարված ապրանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, հանձնման-ընդունման արձանագրությունը չի ստորագրվում և Գնորդը՝

ա) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները.

բ) Վաճառողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

5.3 Գնորդը հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 5 աշխատանքային օրվա ընթացքում Վաճառողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ ապրանքը չընդունելու պատճառաբանված մերժումը:

5.4 Եթե պայմանագրի 5.3 կետով սահմանված ժամկետում Գնորդը չի ընդունում մատակարարված ապրանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատակարարված ապրանքը համարվում է ընդունված և պայմանագրի 5.3 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Գնորդը Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Վաճառողը պատասխանատվություն է կրում հանձնած ապրանքի որակի և պայմանագրով նախատեսված մատակարարման ժամկետների պահպանման համար:

6.2 Վաճառողի կողմից պայմանագրով նախատեսված ապրանքի մատակարարման ժամկետների խախտման դեպքում Վաճառողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատակարարման ենթակա, սակայն չմատակարարված ապրանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

[17.1] Գանձապետարանում հաշիվներ չունեցող պատվիրատուների դեպքում սույն կետի վերջին պարբերությունը խմբագրվում է հետևյալ բովանդակությամբ. «Ընդ որում գնման դիմաց վճարումն իրականացվում է սույն պայմանագրի վճարման ժամանակացույցով սահմանված ժամկետում, հինգ աշխատանքային օրվա ընթացքում:»

6.3 Պայմանագրի 1.1 կետում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք մատակարարելու յուրաքանչյուր դեպքում Վաճառողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի գնի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:[20] Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ապրանքի մատակարարումը սույն պայմանագրով սահմանված ժամկետում կատարելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Վաճառողին վճարման ենթակա գումարների հետ:

6.5 Գնորդի կողմից պայմանագրի 3.3 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Գնորդի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի՝ պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:[21]

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ պայմանագիրը կնքելու նատակով կազմակերպված գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Վաճառողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Գնորդը միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Գնորդը չի կրում պայմանագրի միակողմանի լուծման

---

[20] *Եթե պայմանագիրը կնքվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ կետի հիման վրա, ապա տուգանքը հաշվարկվում է այն համաձայնագրի գնի նկատմամբ, որի շրջանակում արձանագրվել է ստանձնված պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման հանգամանքը:*

Եթե պայմանագիրը ներառում է մեկից ավել չափաբաժին, ապա տուգանքը հաշվարկվում է պայմանագրով այդ չափաբաժնի համար սահմանված ընդհանուր գնի նկատմամբ:

[21] *Պետական բյուջեի միջոցների հաշվին պարտավորություններ չառաջացնող գնումների դեպքում սույն նախադասությունը պայմանագրից հանվում է:*

հետևանքով Վաճառողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Գնորդի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ապրանքի ծավալների կամ ձեռք բերվող ապրանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.6 Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Վաճառողի առաջարկության առկայության դեպքում, պայմանով, որ Գնորդի մոտ չի վերացել ապրանքի օգտագործման պահանջը, իսկ Վաճառողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով իսկզբանե մատակարարման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 7 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Վաճառող կամ Գնորդ) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Վաճառողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Վաճառողը:

8.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքովկամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.9 Վաճառողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Գնորդը հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի ,Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներե բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Վաճառողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Գնորդը այն ուղարկվում է նաև Վաճառողի էլեկտրոնային փոստին:

8.10 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.11 Պայմանագիրը կազմված է __15__ էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.12 Պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

9. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ԳՆՈՐԴ

ՀՀ Արարատի մարզպետարանի աշխատակազմ
ք.Արտաշատ, Օգոստոսի 23/60
ՀՀ Ֆինանսների նախարարություն
ՀՀ 900411099113
ՀՎՀՀ 04204668

--------------------- Ա. Մկրտչյան
Ստորագրություն
Կ.Տ

ՎԱՃԱՌՈՂ

<<Յու. Հարությունյան և Որդիներ>> ՍՊԸ
ք.Արտաշատ, Մարքսի 12 ա
<<ՀայէկոնոմԲանկ>> ՓԲԸ, Արտաշատի մ/ճ
Հ/Հ 163098234806
ՀՎՀՀ 04218413

--------------------- Յու.Հարությունյան
Ստորագրություն
Կ.Տ

Հավելված N 1
23 հունվար 2023թ. կնքված
<< ԱՄ-ՄԱ-ԱՊՁԲ- 23/1-ԱՄ >> ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ապրանքի

չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը և ապրանքային նշանը	արտադրողը և ծագման երկիրը	տեխնիկական բնութագիրը	չափման միավորը	միավոր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր քանակը	մատակարարման		
									հասցեն	ենթակա քանակը	ժամկետը**
1	31531100	Էլեկտրական լամպ	Արտ երկիր	60 W, 80 W, 100 W,Էլեկտրական լամպ (220-230) Վ լարման, 50 Հց հաճախականության, 100 Վտ հզորությամբ, թափանցիկ, տանձաձև կամ սնկաձև, կոթառը E 27/27 տիպի, ԳՕՍՏ 2239-79 կամ համարժեք: Անվտանգությունը՝ ըստ ԳՕՍՏ 28712-90 և ՀՀ կառավարության 2005թ. փետրվարի 3-ի N 150-Ն որոշմամբ հաստատված ,Ցածր լարման էլեկտրասարքավորումներին ներկայացվող պահանջների տեխնիկական կանոնակարգի	հատ	100	71000	710	Ք.Արտաշատ Օգոստոսի 23/60	710	Պայման ագիրը ուժի մեջ մտնելուց հետո մինչև 15.12.23թ
2	31651400	Մեկուսիչ ժապավեն, օղակաձև	Արտ երկիր	Հոսանքի մեկուսացման համար տարբեր երկարության և լայնության գլանափաթեթներով պոլիմերային ժապավեն, կապույտ կամ սև գույնի:	հատ	150	3000	20	Ք.Արտաշատ Օգոստոսի 23/60	20	15.12.23թ
3	31684100	Վարդակ երկբևեռանի	Արտ երկիր	Վարդակ երկտեղանոց	հատ	500	10500	21	Ք.Արտաշատ Օգոստոսի 23/60	21	15.12.23թ
4	39811300	Հոտազերծիչ օդի	Արտ երկիր	Փակ սենյակի հոտի թարմացման համար, վակուումային բալոնիկով, թարմ ծաղկային բուրմունքով	հատ	470	18800	40	Ք.Արտաշատ Օգոստոսի 23/60	40	15.12.23թ
5	39812410	Կահույքի փայլեցման միջոց	Արտ երկիր	Փայլեցնող միջոց փայտյա կահույքի համար, Աերոզոլային փաթեթվածքով կամ հեղուկի	հատ	720	28800	40	Ք.Արտաշատ Օգոստոսի 23/60	40	15.12.23թ

				տարաներով							
6	39831241	Օճառ ձեռքի	Արտ երկիր	Չորսուների, կտորների և այլ ձևերով, որակական թիվը (ճարպաթթուների զանգվածը վերահաշվարկված 100 գ կտորի անվանական զանգվածի համար) ոչ պակաս՝ ,Չեզոքե և ,Էքստրաե տեսակների համար 78 գ, ,Մանկականե և ,Սովորականե տեսակների համար 74 գ, սոդայանյութերի զանգվածային (վերահաշվարկված ըստ Na2O) մասը ոչ ավելի՝ ,Չեզոքե տեսակի համար բացակայում է, ,Էքստրաե տեսակի համար՝ 0,2 %, ,Մանկականե տեսակի համար՝ 0,15 %, ,Սովորականե տեսակի համար՝ 0,22 %, օճառից անջատված ճարպաթթուների պնդեցման ջերմաստիճանը (տիտրը)՝ (36-41) C, նատրիումի քլորիդի զանգվածային մասը՝ 0,4 %-ից ոչ ավելի, անվտանգությունը՝ ըստ ՀՀ առողջապահության նախարարի 2005թ. նոյեմբերի 24-ի N 1109-Ն հրամանով հաստատված ,N 2-III-8.2 օծանելիքակոսմետիկական արտադրանքի արտադրությանը և անվտանգությանը ներկայացվող հիգիենիկ պահանջներե սանիտարական կանոնների և նորմերի, մակնշումը և փաթեթավորումը:	կգ	2100	10500	5	Ք.Արտաշատ Օգոստոսի 23/60	5	15.12.23թ
7	39831242	Լվացքի փոշի ձեռքով լվանալու համար	Արտ երկիր	Սպիտակ, բաց դեղնավուն կամ գունավորած հատիկավոր փոշի: Փոշու զանգվածային մասը ոչ ավել 5 %, pH-ը՝ 7,5-11,5, ֆոսֆորաթթվական աղերի զանգվածային մասը ոչ ավելի 22 %, փրփրագոյացման ունակությունը (ցածր փրփրագոյացնող միջոցների համար) ոչ ավել 200 մմ, փրփուրի կայունությունը ոչ ավելի 0,3 միավոր, լվացող ունակությունը ոչ պակաս 85 %, սպիտակեցնող ունակությունը (քիմիական սպիտակեցնող նյութեր պարունակող միջոցների համար) ոչ պակաս 80 %: Անվտանգությունը, մակնշումը և	կգ	910	27300	30	Ք.Արտաշատ Օգոստոսի 23/60	30	15.12.23թ

				փաթեթավորումը՝ ըստ ՀՀ կառավարության 2004թ. դեկտեմբերի 16-ի N 1795-Ն որոշմամբ հաստատված "Մակերևութաակտիվ միջոցների և մակերևութաակտիվ նյութեր պարունակող լվացող և մաքրող միջոցների տեխնիկական կանոնակարգի" համաձայն:							
8	39831247	Աղտահանող հեղուկ սանհանգույցի համար	Արտ երկիր	Սպիտակ կամ բաց դեղնավուն կամ գունավորած հատիկավոր փտշի, փտշու զանգվածային մասը ոչ ավել 5 %, pH-^7,5-11,5, ֆոսֆորաթթվական աղերի զանգվածային մասը ոչ ավել 22 %, փրփյուզոյացման ունակությունը (ցածր փրփրագոյացնող միջոցների համար) ոչ ավել 200 մմ, փրփուրի կայունությունը ոչ ավել 0,3 միավոր, լվացող ունակությունը ոչ պակաս 85 %, սպիտակեցնող ունակությունը (քիմիական սպիտակեցնող նյութեր պարունակող միջոցների համար) ոչ պակաս 80 %, ՀՍՏ 275-2007: Անվտանգությունը, մակնշումը և փաթեթավորումը՝ ՀՀ կառավարության 2004թ. դեկտեմբերի 16-ի N 1795-Ն որոշմամբ հաստատված ,Մակերևույթաակտիվ միջոցների և մակերևույթաակտիվ նյութեր պարունակող լվացող և մաքրող միջոցների տեխնիկական կանոնակարգի .Ռակշաե ֆիրմայի կամ համարժեք 0.32 կգ տարաներով	լիտր	1400	40600	29	Ք.Արտաշատ Օգոստոսի 23/60	29	15.12.23թ
9	39831280	Ապակի մաքրելու միջոց	Արտ երկիր	Չափածրարված 0,5 կգ զանգվածով: Անվտանգությունը, մակնշումը և փաթեթավորումը՝ ՀՀ կառավարության 2004թ. դեկտեմբերի 16-ի N1795AJ որոշմամբ հաստատված ,Մակերևույթաակտիվ միջոցների և Մակերևույթաակտիվ նյութեր պարունակող լվացող և մաքրող միջոցների տեխնիկական կանոնակարգիե15.12.18թ.	լիտր	870	17400	20	Ք.Արտաշատ Օգոստոսի 23/60	20	15.12.23թ
10	39831283	Հատակի լվացման լաթ	Արտ երկիր	Լաթեր 45x80սմ բամբակա գործվածքից՝ հատակը լվանալու	հատ	750	37500	50	Ք.Արտաշատ Օգոստոսի	50	15.12.23թ

				համար					23/60		
11	39221410	Ավել	Արտ երկիր	Աղբը հավաքելու համար, ձողով, ավելով ՀՍՏ 124-2007 կամ համարժեք: Տարողունակ գոգաթիակ, 27*23սմ+ավել, 104սմ	հատ	850	25500	30	Ք.Արտաշատ Օգոստոսի 23/60	30	15.12.23թ
12	31531300	տնտեսող լամպեր	Արտ երկիր	1.LED լամպ: Սպառող հզորություն՝ 6* Վտ: Համարժեք հզորություն՝ 100* Վտ: Կոթառի չափ՝ E 14: Լուսատվություն՝ 1200* լյումին: Գույնի ջերմաստիճան՝ 4100* կելվին: Սպասարկման ժամկետ՝ 30000* ժամ:	հատ	800	20000	25	Ք.Արտաշատ Օգոստոսի 23/60	25	15.12.23թ
13	31531300	տնտեսող լամպեր	Արտ երկիր	2.LED լամպ: Սպառող հզորություն՝ 6* Վտ: Համարժեք հզորություն՝100* Վտ: Կոթառի չափ՝ E 27: Լուսատվություն՝ 1200* լյումին: Գույնի ջերմաստիճան՝ 4100* կելվին: Սպասարկման ժամկետ՝ 30000* ժամ:	հատ	830	83000	100	Ք.Արտաշատ Օգոստոսի 23/60	100	15.12.23թ
14	39221480	զուգարանի խոզանակներ	Արտ երկիր	Պլաստմասե պոչով	հատ	900	9000	10	Ք.Արտաշատ Օգոստոսի 23/60	10	15.12.23թ
15	39224332	դույլ, ցինկապատ	Արտ երկիր	10լ ցինկապատ դույլ	հատ	1000	6000	6	Ք.Արտաշատ Օգոստոսի 23/60	6	15.12.23թ
16	39224331	դույլ, պլաստմասե	Արտ երկիր	10լ պլաստմասե դույլ	հատ	420	5040	12	Ք.Արտաշատ Օգոստոսի 23/60	12	15.12.23թ

ԳՆՈՐԴ

ՀՀ Արարատի մարզպետարանի աշխատակազմ
ք.Արտաշատ, Օգոստոսի 23/60
ՀՀ Ֆինանսների նախարարություն
Հ/Հ՝ 900411099113
ՀՎՀՀ՝ 04204668

ՎԱՃԱՌՈՂ

<<Յու. Հարությունյան և Որդիներ>> ՍՊԸ
ք.Արտաշատ, Մարքսի 12 ա
<<ՀայէկոնոմԲանկ>> ՓԲԸ, Արտաշատի մ/ճ
Հ/Հ՝ 163098234806
ՀՎՀՀ՝ 04218413

------------------------- Ա. Մկրտչյան	------------------------- Յու. Հարությունյան
/ստորագրություն/	/ստորագրություն/
Կ.Տ	Կ.Տ

Հավելված N 2
23 հունվար 2023թ. կնքված
<< ԱՄ-ՄԱ-ԱՊՁԲ- 23/1-ԱՄ ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

22 դրամ

Ապրանքի															
Չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2023թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում**												
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
1	31531100	Էլեկտրական լամպ	7100	7100	7100	24000	24000	24000	42000	42000	42000	71000	71000	71000	71000
2	31651400	Մեկուսիչ ժապավեն, օղակաձև	-	-	-	1000	1000	1000	1800	1800	1800	3000	3000	3000	3000
3	31684100	Վարդակ երկբևեռանի	1000	1000	1000	3500	3500	3500	6000	6000	6000	10500	10500	10500	10500

4	39811300	Հոտազերծիչ օդի	1800	1800	1800	5600	5600	5600	11200	11200	11200	18800	18800	18800	18800
5	39812410	Կահույքի փայլեցման միջոց	2800	2800	2800	10000	10000	10000	17000	17000	17000	28800	28800	28800	28800
6	39831241	Օճառ ձեռքի	1000	1000	1000	3500	3500	3500	6000	6000	6000	10500	10500	10500	10500
7	39831242	Լվացքի փոշի ձեռքով լվանալու համար	2700	2700	2700	9500	9500	9500	16000	16000	16000	27300	27300	27300	27300
8	39831247	Աղտահանող հեղուկ սանհանգույցի համար	4000	4000	4000	14200	14200	14200	24000	24000	24000	40600	40600	40600	40600
9	39831280	Ապակի մաքրելու միջոց	1700	1700	1700	6000	6000	6000	10600	10600	10600	17400	17400	17400	17400

10	39831283	Հատակի լվացման լաթ	3700	3700	3700	13000	13000	13000	22500	22500	22500	37500	37500	37500	37500
11	39221410	Ավել	2500	2500	2500	9000	9000	9000	15000	15000	15000	25500	25500	25500	25500
12	31531300	տնտեսող լամպեր	2000	2000	2000	7000	7000	7000	12000	12000	12000	20000	20000	20000	20000
13	31531300	տնտեսող լամպեր	8300	8300	8300	29000	29000	29000	49000	49000	49000	83000	83000	83000	83000
14	39221480	զուգարանի խոզանակներ	1000	1000	1000	3000	3000	3000	5400	5400	5400	9000	9000	9000	9000
15	39224332	դույլ, ցինկապատ	-	-	-	2000	2000	2000	3600	3600	3600	6000	6000	6000	6000

16	39224331	դույլ, պլաստմասե				1700	1700	1700	3000	3000	3000	5040	5040	5040	5040

ԳՆՈՐԴ

ՀՀ Արարատի մարզպետարանի աշխատակազմ
ք.Արտաշատ, Օգոստոսի 23/60
ՀՀ Ֆինանսների նախարարություն
Հ/Հ՝ 900411099113
ՀՎՀՀ՝ 04204668

_____ Ա.Մկրտչյան
/ստորագրություն/
Կ.Տ.

ՎԱՃԱՌՈՂ

<<Յու. Հարությունյան և Որդիներ>> ՍՊԸ
ք.Արտաշատ, Մարքսի 12 ա
<<ՀայէկոնոմԲանկ>> ՓԲԸ, Արտաշատի մ/ճ
Հ/Հ՝ 163098234806
ՀՎՀՀ՝ 04218413

_____ Յու.Հարությունյան
/ստորագրություն/
Կ.Տ.

Հավելված N 3
, ե հունվար 2023թ. կնքված
<< ԱՄ-ՄԱ-ԱՊՁԲ- 23/1-ԱՄ ծածկագրով պայմանագրի

Պայմանագրի կողմ

_____

_____

գտնվելու վայրը _____

հհ _____

_____

հվհհ _____

Պատվիրատու

_____

_____

գտնվելու վայրը _____

հհ_____

_____

հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝ _____
Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ ,____ե ,_____ե 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն՝ ի դեմս _____
Պայմանագրի կողմը՝ ի դեմս_____ և
_____, հիմք ընդունելով Պայմանագրի կատարման վերաբերյալ ,____ե ,_____ե 20 թ. կազմված՝ գնման հայտը նախագծած ներկայացուցչի N եզրակացությունն այն մասին, որ Պայմանագրով նախատեսված՝ ստորև նշված մատակարարումները համապատասխանում են Պայմանագրով ամրագրված տեխնիկական բնութագրերին և գնման ժամանակացույցին՝ կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.

Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատակարարել է հետևյալ ապրանքները՝

N	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	Մատակարարված ապրանքների				Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը			
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Վերոհիշյալ մատակարարումների կատարման վերաբերյալ բոլոր հաշիվ-ապրանքագրերը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ապրանքը հանձնեց

_____
ստորագրություն

_____
ազգանուն, անուն

Կ.Տ.

Ապրանքն ընդունեց

_____
ստորագրություն

_____
ազգանուն, անուն

Կ.Տ.

Հավելված 3.1
, ե հունվար 2023թ. կնքված
<< ԱՄ-ՄԱ-ԱՊՁԲ- 23/1-ԱՄ ծածկագրով պայմանագրի

ԱԿՏ N _____
պայմանագրի արդյունքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Գնորդ) և _____
Գնորդի անվանումը Վաճառողի անվանումը
(այսուհետ՝ Վաճառող) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը
պայմանագրի շրջանակներում Վաճառողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Գնորդին հանձնեց ստորև նշված ապրանքները.

Ապրանքի		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
Ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն